

766

ՀԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՄԱԿԱՎԱՐՔԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՍՏԱՆՏՈՒԾ

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Պատմ. գիր. քեկմանը.)

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՍՏԵՂՆՄԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

003  
Հ-42

ՄԱՆԿԱԿՐԴԱԿԱՆ ԻՆՍԻՆՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐԵՎԱՆ

1940

ՀԽՍՀ ՇԵՐԵՎԱՆԻ ՊԻՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԱՆ ԽՆՍԻՑՈՒՅՆ

003  
Հ-42

25 MAY 2005

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

(Պատմ. գիտ. քեկնածու)

ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ԱՏԵՂՄԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ



ՄԱԿԱՐԴԱԿԱՆ ԽՆՍԻՑՈՒՅՆ ՀՐԱՏԱՐԿՎԵԼՔԵՐՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ

1940

## ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայկական գրերի ստեղծման պատմության մասին կարևոր աղբյուրներ են համգիսանում Կորյոչնի «Մեսրոպի կլանքը», Մովսես Խորենացու և Ղազար Փարափեցու «Հայոց պատմություն» աշխատառթյունները։ Փարափեցին գրեթե բառացի ոգտվում է Կորյոչնից և ինքն ել նշում ե, թե ովքեր ուղղում են ավելի լավ ծանոթանալ հայոց գրերի հեղինակի գործունեյալ հետ, պետք է կարգան Կորյունի աշխատառթյունը։ Այսպիսով, գրերի դյուարի հարցի մասին վորպես որիդինալ հեղինակներ հանդես են գալիս Կորյունը և Խորենացին, վորոնք, ինչպես պետք է յինթաղրել իրարից չեն ոգտվել։ Հետագա զրջանի՝ 9—13-րդ դարերի պատմիչները միայն կրկնում են վերը նշված հեղինակներին։

Մակայն, վճրն է հավասարի աղբյուր, Կորյունը թե Խորենացին։ Մինչև այժմ յեղած գրեթե բոլոր ուսումնասիրողներն առաջնությունը ավել են Կորյունին, վարպես Մեսրոպի հետ գործողի և նրա կիսապրությունը գրաղի։ Խորենացին դիտվել ե վորպես լրացուցիչ աղբյուր։ Մենք հակառակն ենք կարծում։ Հայկական գրերի ստեղծման պատմության վերաբերյալ ավելի հավասար յեն Խորենացու պատմության մեջ յեղած տեղեկությունները։

Խորենացին, վորպես Մահակ-Մեսրոպի կրտսեր աշակերտ, իր պատմությունը գրել է 460—470-ական թվականներին, Մահակ Բաղրատունու պատվիրով և ծանոթ չի յեղել Կորյունի աշխատառթյան հետ, վարը պետք է զրված լինի 440—450-ական թվականներին։ Կորյունն աշխատել է իր ուսուցչի կյանքն ու գործունեյությունը վարքի ձևով տար վորի հետևանքով և նրա աշխատառթյունը վարոշափով կորցրել ե յուր պատմական արժեքը, այնինչ Խորենացին աշխատում ե պատմական փաստերն ավելի



19795

48.



Խմբագիր՝ Մ. Ներսիսյան  
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ  
Սըբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Գլավիտի լվազը՝ Ե-1141, Պատվեր 263, տիրած 1000  
Հանձնված է արտադրության 23 հունիսի 1940 թ.  
Ստորագրված է տպագրության 5 ոգոսառության թ.

Մանկ., Խնամիտութիւն տպարան, Ենթեղան, Մարքսի փ. 17, 1940 թ.

20775-59

ճշգրիտ կերպով շարադրել: Նկատի ունենալով այս հանգամանքը՝ ները, մենք մեր սույն մենագրության մեջ հենվում ենք գլխավորապես Խորենացու տվյալների վրա:

Մեր ներկա աշխատությունը, վոր կարգացվել և Պետհամալսարանի լեկտորիումում 1939 թվի գեկտեմբերի 12-ին և Մանկավարժական Խոստիտուտի մայիսյան յերկրորդ գիտական սեսիայում, նպատակ ունի նշելու Մեսրոպի մահվան 1500-ամյակը, վորը լրացավ 1940 թ. սկզբներին:

## 1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՅՈՒՆԸ 4-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ՅԵՎ 5-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Հայաստանը գտնվելով Արեւելքի և Արևմուտքի մեծ պետությունների՝ Պարսկաստանի Համբետկան կայսրության միջն, յերկար ժամանակ պատերազմի թատերաբեմ և հանգիստացել այդ յերկու հզոր պետությունների համար: Մեր թվադրության 63 թվին Հայաստանում ձեռկերպված հայ Արշակունի պետությունը չեր կարող իր կոյսությունը պահպանել անվերջ կրկնվող արշավանքների պայմաններում, արշավանքներ, վորոնք հարատե ելին և մշտական: Այդ արշավանքներին զուգընթացար տեղի ելին ունենաւմ հայ նախարարների, իշխանների ներքին արյունակի կափաները մեկը մյուսի և հաճախ՝ հայ Արշակունի թափավորների գեմ: Ներքին ու արտաքին կափաների և պատերազմների հետեանքով հայկական թափակարությունը կործանվեց և 387 թվին, Տիգրոնի գաշնագրությամբ բաժանվեց Հոռմեական կայսության և Սասանյան Պարսկաստանի միջև:

Հայաստանի արեւելյան մասը՝  $\frac{4}{5}$ -ը բաժին ընկավ Պարսկաստանին և կոչվեց Պարսկական կամ Արեւելյան Հայաստան: Իսկ  $\frac{1}{5}$ -ը՝ Հայաստանի արևմտյան գավառները կարին կենարունով, բաժին ընկավ Հոռմեն և կոչվեց Արեմայան Հայաստան: Հոռմեական կայսրության 395 թվի բաժանումից և Բյուզանդական կայսերության կազմակերպումից հետո, Արևմտյան Հայաստանն անվանվեց նաև Բյուզանդական Հայաստան:

Հայաստանի 387 թվի բաժանումից հետո նրա յերկու մասերումն ել ժամանակակիրության պահպանվեց հայ Արշակունի թագավորությունը: Արշակ Գև (377—386), վոր նախքան բաժանումն իշխում եր ամբողջ Հայաստանի վրա, բաժանումից գեռ պոաջ, 386 թվին, անցավ Արևմտյան Հայաստան և այնտեղ իշեց, Արեւելյան Հայաստանից նա իր հետ տարել եր մեծ քանա-

կությամբ աչքի ընկնող իշխանների։ Պարսկական բաժնի Հայաստանում, բաժանումից դեռ մի տարի առաջ՝ նույն 386 թվին, հայ նախարարների պահտնջով թագավորում եր Խոսրով Գևո (386—391), վորը զարձյալ հայ Արշակունիների տոհմից եր։

Արշակ Գևի մահից հետո Հայոմեական կայսրությունն Արևմբայան Հայաստանում այլև թագավոր չնշանակից նույն Հայաստանի այդ մասը վեր ածեց մի նահանգի և կցեց կայսրության կառավարման իրավունքը հանձնելով կայսրության կողմից նշանակված կառավարիչներին<sup>1)</sup>։ Պարսկական Հայաստանում հայ Արշակունի թագավորության միացորդներն ավելի յերկար պահպահից իրենց գոյությունը։ Սասանյան արքունիքը հայ Արշակունի թագավորության յերկար պահպանմամբ յերկու նախատեսկ հեր հետապնդում, նախ աշխատում եր վստահություն ստեղծել և Արշակ Գևի հետ Արևմայան Հայաստան վնացած հայ նախարարներին վերադարձնել իրենց տեղերը՝ ուղարկութելով նրանց սազմական ուժը, և յերկրորդ՝ զրանով նույնություն եր հայերի համակրանքը շահել և կտրել նրանց Արևմայան ազգեցությունից, թերքել գեղի Պարսկաստան։ Տիգրոնի արքունիքն առաջին խընդում հասալ իր նպատակին, իսկ յերկրորդում՝ վոչ։

Արշակի մահից հետո՝ Խոսրով Գ-ը՝ ձգտում եր իր իշխանության առակ առնել Արևմայան Հայաստանը։ Այդ պատճառով նա ավելի յե սկսում սիրաշահել և իր կողմը զրավել այդ մասի հայ նախարարներին։ Իր նպատակներն իրազործելու համար Խոսրով Գևո Առաջուրակին կաթողիկոսի մահից հետո համաձայնում և կաթողիկոսական աթոռը նորից հանձնելու կառավորիչի տահամին, հանձին Սահակ Պարթևի, վորն ազգեցիկ հոգեւրաքան եր յերկրում և կարող եր Խոսրովին մեծ ուժանգակություն ցույց տալ՝ Արևմայան Հայաստանը հռոմեացիների գերիշխանությունից ազատելու գործում։ Արևմայան Հայաստանի հայ նախարարները Խոսրով Գևի մտադրությունը հաշվի առնելով Գալավոն Կամսարականի գլխավորությամբ մի գըություն են ուղարկում նրան և հայտնում հետեյալը։ — «Գալավոն կորագլխից և

հունական բաժնի բոլոր հայեական նախարարներից, մեր տերին, Այրարատի կողմի Խոսրով թագավորին վողջույն»

Դու, ինքու գիտես, տեր, մեր հավատարմությունը դեպի մեր Արշակ թագավորի հիշատակը, վորը մենք անփոփոխ պահպահինք մինչև նրա մտավան որը, Յել այժմ մենք մտածել ենք ծառայել քեզ նույնություն հավատարմությամբ, յեթե գաշինքով կհաստատես մեզ այս յերեք ցանը, առաջին՝ չիշել մեր հանցանքը... Յերկրորդ, վոր վերտպարձնես մեզ մեր բոլոր կարգածները, վորոնք պարսկական բաժնում են և զրավել եք արքունիքը։ Յերրորդ՝ հնար գանել մեզ կայսրից ազատելու, վոր չվրդովին մեր բնականությունները, վորոնց տիրում ենք այս բաժնում։

«Սարաւելան Գալավոն և ամենայն նախարարք Հայոց մասինն Յունաց, տեան մերում Խոսրովու արքայի կողմանն Այրարատայ ինդար։

Ինքնին, տէր, գիտես զմտերմութիւն մեր առ յիշել թագավորին մերում Արշակայ, զոր մինչև ցօր վախճանին անշիշելի պահեցաք, և արդ խորհեալ եմք նոյնպէս ծառայել քեզ միամտութեամբ, եթէ հաստատեսցես առ մեզ զաշամբք զերիս զայսուիլ։ Առաջին, չյշել զյանցանս մեր... Երկրորդ, զի զարցուսցես ի մեզ զամենայն ժառանգութիւնս մեր՝ որ ի մասինդ Պարսկից, զոր հատէր յարքունիս։ Երրորդ, հնարել թափել զմեզ ի կայսերէ, զի մի վրգովեսցեն զբնակալութիւնս մեր, որք ունեմք եշխանութիւն յայսմ բաժնի»<sup>1)</sup>։

Խոսրով Գ-ն ստանալով նախարարների թուղթը, պատասխանում և նրանց. «Քաջարանց Խոսրով Հայոց թագավորից Գալավոն զորապետին և մեր բոլոր նախարարներին շատ վոր շույն»։

Շատ ուրախ յեղեք, վորովհետեւ մենք ել վողջ ենք և ուրախացանք ձեր վողջույնի լուրն ստանալով և Զեր ինդը համաձայն ուղարկեցինք Զեզ այս ուխտն ու պայմանը։ Առաջին, չիշել ձեր հանցանքը... Յերկրորդ, վերադարձնել Զեզ ձեր կարգածները, վոր արքունիք ենք գլավել բացի նրանից, վոր վոժանց պարզեցինք, և թագավորների պարզեները հետ չեն առնվում առանց հան-

<sup>1)</sup> Մովսես Խորենացի, «Պատմություն Հայոց», գիրք 9, գլ. Խ՛, Թիֆլիս 1913 թ.։

յանքի, մանավանք, վոր այս պարզեները մտան մեր հոր թագավորաների թագավոր տեր Շապուհի դիվանը, Այլ սրա փոխարեն ձեր կալվածների պակասությունն արքունի կալվածներից կրացնենք: Յերբորդ, կազատնք ձեր հունական կառավարիչներից կամ պատերազմով կայսրի հետ, կամ խաղաղությամբ»:

«Քաջ արանց Խորով Հայոց արքայ, Ստրատելատի Գագաւոնի և ամենայն նախարարաց մերոց ողջոյն:

Շատ ուրախ լերուք, զի և մեք ողջ եմք, և ուրախացաք ընդ լուր ողջոյնի ձերոյ, և առաքեցաք ըստ ինքոյ ձերոյ զայս պայման ուխաւ Առաջին, չյիշել զյանցանս ձեր... Յերկրորդ, զարձուցանել ի ձեզ գժառանգութիւնս ձեր, զոր ունիմք յարքունիս, բայց ի յայնմանէ՝ զոր ումէք պարզեցաք, և ոչ շրջին պարզեք թագաւորաց առանց վասու, մանավանդ զի ի գիւտն հօրն մերոյ տեսառն Շապաւոյ արքայից արքային եմուտ, այլ փոխանակ ընդ այսր և յարքունուս լումք և զձերոյն պակասութիւնն: Երրորդ, թափեմ զձեզ ի գործակալացն Յունաց, թէպետ պատերազմու ընդ կայսեր, ոլէպետ խաղաղութեամբ»<sup>1)</sup>:

Մովսես Խորենացու այս տեղեկություններն ուշագրավ են այն տեսակեաից, վոր պարզաբանում են հողային կալվածային հարաբերությունները Հայուստանում Գ-րդ գտրում: Այդ գրությունները, վոր բերում են Խորենացին, հաստատում են, վոր հողն Արշակունի վերջին թագավորների ժամանակ պատկանում եր նախարարներին—Փեղալներին. հետեար սխալվում են այն ուսումնասիրողները, վորոնք կարծում են, թէ հողն այդ շրջանում պետական ե յեղել:

Խորովի այս գրությունից հետո, Գագավոն Կամսարականի գլխավորությամբ Արեւադյան Հայաստան գնացող նախարարները և այնտեղի իշխանների վորոշ մասն իրենց հետ տարած արքունի գանձերով վերադառնում են Արևելյան Հայաստան, զորպես իրենց գործունեյության համար ավելի ազահով մի վայրի: Այսուհետեւ Խորով Գ-ը Սահակ կաթողիկոսի հետ միասին յերկրի իշխաններին համախմբում են այ Արշակունի թագավորության շուրջը՝ ստեղծելով նախապայմաններ վերականգնե-

լու հայկական միասնական թագավորությունը Հայաստանի յերկու մասերում:

Խորով Գ-ն իրեն բավականաշափ ուժեղ զգալով, հոռմեական կայսր Արկադից խնդրում է իրեն հանձնել Արեւադյան Հայաստանի կառավարման իրավունքը՝ խոստանալով հարկ վճարել և հաշվի առնել հույս կառավարիչներին: Արկադը շահագըրգոված վինելով Խորովին սիրաշանելու գործում, բավարարում է Խորովի պահանջը՝ ձանաչելով նրան նաև Արևմտյան Հայաստանի թագավոր: Այսպիսով Խորովին հաջողվում է Հայաստանի յերկու մասերը միավորել մի պետական ամբողջության մեջ, մի թագավորի կառավարման իրավասության ներքո: Դրանով արշվում է առաջին լուրջ քայլը՝ Հայաստանը Սասանյան իրանի և Հոռմեական կայսրության գերիշխանությունից դուրս բերելու ուղղությամբ:

Սասանյան արքանիքը, վոր իրազեկ եր հայ մի քանի իշխանների միջոցով Խորովի ձեսնարկած քայլերին, վոր նա առանց իր զիտության «բարեկամացել» եր հոռմեական կայսրի հետ և կաթողիկոս ընտարել Սահակ Պարթեին՝ Լուսավորչի տոհմից, մի տոհմ, վորը Սասանյանների գարավոր թշնամի յեր, սպասնում է Խորովին: Վերջինս պարուկական թագավոր Շապուհ Գ-ի պատգամաբերին անարգելով հետ և վերադարձնում և մերժում է Շապուհի պահանջը: Դա փաստորեն ապստամբություն եր Սասանյան արքունիքի գեմ:

Խորով Գ-ն անմիջապես պահանջում է կայսրից, վոր նա չեղյալ հայտարարի Պարսկաստանի հետ կնքած խաղաղության դաշինքը և զորքով ունի իրեն՝ Խորովանալով Արևելյան Հայաստանը գուրս բերել Պարսկաստանի գերիշխանությունից և յենթարկել Հոռմին: Հայ նախարարների մի փոքրաթիվ մասը, դավաճանելով Խորովին, մեղադրում է նրան Հոռմի հետ բանակցություններ վարելու մեջ: Շապուհն իր վորդի Արտաշերին մեծ բանակով Հայաստան և ուղարկում Խորովին պատժելու համար: Հոռմեական խորամանկ կայսրը հրաժարվում է Խորովին ողնելու: Վերջինս գրսից ողնության հույս չունենալով, ստիպված է վինում հնագանդվել Տիգրոնի արքունիքին և գնում է Արտաշերի մոտ:

Արտաշերը ձերբակալում է Խորովին և գահազուրկ անում

† Մ. Խորենացի, գերք Գ, գլ. ԽԸ:

նըան՝ թագավոր նշանակելով նրա յեղայր Արտշապւհին (391—414): Արտաշերը վախենալով նոր ազստամբության բռնկումից, բանակի մեծ մասը թողնում է Հայաստանում, իսկ ինքը վերադառնում է Տիգրոն՝ առնելով իր հետ շվթայակաղ Խոսրովին և Գաղավոն Կամսարականին: Պարսիկները վախենում ենին Գաղավոն Կամսարականից, վորտիս ազդեցիկ իշխանից, թե նա կարող է ապատամբություն բարձրացնել Պարսկաստանի գեմ: այդ պատճառով Տիգրոնի արքունիքը նրան ել է ձերակալում: Գաղավոնի, ինչպես և նրա յեղայրը Շավարշը ու Պարգևի Ամատունու ունեցվածքը հարքունիուն գրավում: Վերջինս ներս փորձ են անում իրենց 700 հոգուց բազկացած վարչաթիվ զորքի միջոցով ապատել Խոսրովին և Գաղավոնին, բայց հաջողություն չին ունենում: Արտաշերը զբանից հետո մի քանի իշխանների ևս շվթայակաղ և անել տալիս և ունենում Տիգրոն ու բանտարկում: Դրանցից Պարգև Ամատունուն մորթազերծ են անում պարսկական սովորության համաձայն:

Վուամշապուհ թագավորը հիմնականում շարունակուել եւ իր յեղոր՝ Խոսրովի քաղաքականությունը՝ նպատակ ունենալով վերականգնել հայ Արշակունիների թագավորության նախկին իրավունքները: Բայց փոխում եւ իր աշխատանքի մեթոդներն ու ձեերը: Նա արագուստ հավատարիմ մնալով Տիգրոնի արքունիքին՝ ներքուստ մեծ զարկ է տալիս հայերի մեջ անկախության ձգտելու գաղափարներին:

Վուամշապուհի յերկարաժամ տիրապետության շրջանում խոշոր թոփչքներով և զարգանում Հայաստանի անտեսական ու կուտուրական կյանքը, նրա որով և հորինվում հայկական գիշերը, վորի ստեղծումը կապված է Մելրով Մաշտոցի անվան հետ:

## 2. ԳՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գրերի գյուտը մարդկային հասարակության հանճարեղ մտածողության արդյունքներից մեկն է: Նա մեծ զարկ տվեց քաղաքակրթության ու առաջադիմության: Առանց գրերի գյուտի հարավոր չե քաղաքակրթությունը, ենգելու քաղաքակըրթության նախապայմաններից մեկը համարում է գրի և գրակառ

նության ստեղծումը<sup>1)</sup>: Գրերով և, վոր մարդը գրի յե առնում իր գաղափարներն ու մտքերը և թողնում հաջորդ սերունդներին: Սակայն գրերի գյոււրը միանգամբ առաջ չի յեկել, — դա յերկար գարերի մտածողության և զարգացման ու փորձերի արդյունքն է յեղել: Գրերի վերջնական ձևակերպումը — դա գարավոր պրատումների վերջին ամենահաջող փորձն եր:

Ներկայումս գործածվող գրերից գեռ շատ առաջ, հոգաբար տարբիների ընթացքում մարդկային հասարակությունը տարբեր յերկներում, տարբեր միջավայրերում գրելու տարբեր ձևեր և հորինել: Որինակ, յեկիսլացիները գրում եյլն հիերոգլիֆներով, բարելացիները, ասորեասանցիները և խալերը՝ սեպագրերով, իսկ զրանցից ել առաջ նախապատմական մարդկությունն ավելի պրիմիտիվ ձևով գրում եր պայմանական զանազան նշաններով: Գրերի զարգացումը կատարվել է աստիճանաբար, զնաւով պրիմիտիվ ձևեր գեղի ավելի կատարելագործված ձևերը՝ հասնելով ներկա գրերի զարգացման աստիճաննին:

Գրերի այն ձևերը, վոր ներկայումս գործածում են յելքուացիները և Ասիայի լազմաթիվ ժողովուրդները, պարտական են հրեաներին ու փյունիկեցիներին: Երանք յեղան մարդկային հասարակության առաջին ծիծնանակները, վսրոնք կազմեցին վակատար այբուբենը: Երանցից այդ այբուբենը տարածվեց գեպի Արեելք և Արեմուաք: Այբուբենն սուաջին անգամ փյունիկեցիներից անցավ Հունատանք, վարտեղից՝ Իսալիա և Ճնունդ տվեց հումեական կամ լատինական այբուբենին, իսկ վերջինիս հիման վրա կազմվեցին ներկա յեվրոպական ժողովուրդների այբուբենները: Եյնուհետեւ այբուբենը Հունատանք անցավ ոլովոնական ժողովուրդներին և հայերին, իսկ Հրեաստանից անցավ Արեելք: Հրեական այբուբենից կազմվեցին սեմիտական ժողովուրդների և պարսիկների այբուբենները: Այսպիսով, հրեափյունիկան նշանագրերի հիման վրա, յերկար գարերի ընթացքում կազմվեցին յերկագնդի ժողովուրդների մեծ մասի այբուբենների հիմքը: Բայց յուրաքանչյուր ժողովուրդ վեցնելով այդ տառերն իր հերթին հարմարեցրեց իր լեզվի հնչյունաբա-

<sup>1)</sup> Ֆ. Ենգելս, «Բնաւանիքի, մասնավոր սեփականության և պետական ծագումը», եջ 9, Յերկան, 1936 թ.:

նական ձևերին՝ ձևափոխելով, լրացնելով և կատարելագործելով  
այն։ Այդ ձևով վարվեց հայոց գրերի նկատմամբ նաև Մեսրոպ  
Մաշտոցը։

### 3. ՀԱՅՈՑ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Խոսրով Գ-ի վարած քաղաքականությունը՝ դռւրս բերել  
Հայաստանը հառմի և Պարսկաստանի զերիշշանությունից, ինչ-  
պես տեսանք վերեռում, մատնվեց տնհաջողության։ Հայ ժողովուր-  
դը փաստորեն շարունակեց մաս յերկու տարրեր պիտություն-  
ների տնտեսական-քաղաքական և կուլտուրական ազդեցություն-  
ների ներքո, մի ազդեցություն, վորը կարող եր Հայաստանի  
յերկու մասերը կտրել մեկը մյուսից և հետացնել իրարից կու-  
տուրապես և տնտեսապես։ Քաղաքական այս անդամանապած  
վիճակը հայերին ձուլելու լուրջ վտանգի առաջ եր կանգնեց-  
նում։ Առա այս կարեոր հարցն եր, վոր 4-րդ գարսի վերջերին և  
5-րդ գարի սկզբներին վուածապուհ թագավորի տիրապետու-  
թյան աարիներում մատածության առարկա յէ դառնում Հայաս-  
տանում։ Յերկրի առաջագեմ մարդկանց շրջանում զարգանում  
և այն զաղափարը, վոր անհրաժեշտ և ստեղծել այնպիսի մի մի-  
ջոց, վորը հնարավորություն տա ստեղծելու Հայաստանի յեր-  
կու մասերի միջև կուլտուրական և զաղափարական միասնու-  
թյուն։ Այդպիսի կարեոր միջոցը, պարզ ե, վոր կարող եր լինել  
միմիայն հայկական գրերի ստեղծումը, վոր իսկապես մեծ զարկ  
կարող եր տալ կուլտուրային, կամեղծեր համախմբվածություն  
հայերի մեջ և հնարավորություն կտար պահպանելու ժողովրդի  
ինքնուրույնությունը՝ թույլ չտալով ձուլվելու ստարների հետ։

Հայերեն գրերի ստեղծումը միաժամանակ հնարավորու-  
թյուն կտար վերականգնելու յերկրի անկրախությունը, ուժեղաց-  
նելով Արշակունիների պետությունը։ Վուածապուհ թագավորը  
հայոց գրի ստեղծման մեջ տեսնում եր վոչ միայն հայ ժողո-  
վը կուլտուրայի զարգացումը, այլև դրա մեջ տեսնում եր  
թուլացած պետության ամրապնդումը։

Հայերեն գրերի ստեղծման յերկրորդ նախադրյալը հանգի-  
սանում եր քրիստոնեյության ապահովումը։ Հայկական գրի  
ստեղծումից ուղիղ հարյուր տարի առաջ, չորրորդ դարի սկզբա-

բին, Հայաստանում մուշք եր գործել քրիստոնեյությունը։ Մա-  
կայն այդ հարյուր տարվա ընթացքում քրիստոնեական գաղա-  
փարախոսությունը լայն ծավալ չեր ստացել Հայաստանում։ Աշ-  
խատավորական մասսաները դեռ շարունակում եյին կապիւծ  
միաւ իրենց հին հեթանոսական կրոնին։

Ավետարանի լիգուն անհասկանալի յեր ժաղավրդի համար։  
Նա կարգացվում եր ասորերեն կամ հունարեն լիզուներով, ապա  
միայն թարգմանվում հայերեն։ Դրանք կոչվում եյին բերանա-  
ցի թարգմանիչներ։ Քրիստոնյա քարոզիչները մեծ դժվարու-  
թյունների առաջ եյին կանգնում։ Նրանց գործը պահանջում եր  
հայերեն գրի և գրականության ստեղծումը։ Ոտար լիզուներով  
սովորելու և քրիստոնյություն տարածելու գժվարությունների  
մասին հետաքրքիր տեղեկություն և տալիս ծարք գարի յերկ-  
րորդ կեսի պատմագիր Ղաղար Փարպեցին։ Նա ասում ե.

«...Յերանելի Մելուզ Մաշտոցը հոգ տանելով, միշտ աըրտ-  
մում եր՝ տեսնելով Հայաստանի այն մանուկների մեծ չարչա-  
րանքը և արած շատ ծախսելը, վորոնք շատ զբանակրով, յերկար  
ճանապարհորդությամբ և յերկարատե չարչարանքով մաշում  
եյին իրենց որին ասորի գիտության գլուցներում։ Վարովինե-  
տե յեկեղեցական արարողություններն ու սուրբ գրքի ընթերց-  
մունքները վանկերում և հայոց յեկեղեցիններում ասորոց գրե-  
րով եյին կատարված։ այսպիսի մեծ աշխարհի ժողովուրդները  
վոչինչ չեցին կարողանում հասկանալ և ոգուտ ստանալ, պաշ-  
տոնյաները նեղություն եյին կրում և ժողովուրդն ոգուտ չեր  
ստանաւմ ասորոց լիզի անկատարությունից։ այս բանի մասին  
շատ ժամանակ մատածել եր այն յերանելի Մաշտոցը և նեղությու-  
վել ինքն իրեն, մանավանդ թե հայերեն նշանազրեր կոն,  
վորոնցով կարելի յեր հայկական և վոչ մուրացած հնչուններով  
կարգալ ու առասարար այր ու կին մարդկանց հոգիքը շահել  
բոլոր յեկեղեցիններում։»

«...Երանելոյ առն Մաշտոցի ընկալիալ յամենախնամ մար-  
դասէրեն Աստծոյ՝ զորացոյց զնա հոգով ողորմութեան իւրոյ։  
Քանզի հոգացյալ յալամամ տրամեր երանելի այրն Մաշտոց տե-  
սանելով զմեծ ջանն և զառաւելապէս ծախս մանկանց Հայաս-  
տան աշխարհիա, որք բաղում թոշակօք և հետազնաց ճանապար-  
հօք և բազմաժամանակեայ գեղերմամբ մաշէին զառուը իւր-  
եանց ի դպրոցս ասորի գիտութեան։ Քանզի պաշտոն եկեղեցւոյ

և կարդացմունք գրոց ասորի ուսմամբ վարէին ի վանորայս և եկեղեցին Հայաստան ժողովրդոց, յորմէ ոչ ինչ էին կարող լսել և օգտել ժողովուրդքն այնպիսի մեծ աշխարհի, և լինէր ողաշտոնէիցն աշխատութիւն և ժողովրդոցն անշահութիւն յանւ լութիւնէ լեզուին ասորոյ: Զայս ի բարում ժամանակս զմտաւ ածհալ երանելի առն Մաշտոցի, և փղձակցեալ յանձն իւր, մանավանդ թէ զոն նշանագիրք հայերէն լեզուոց, որով հնար է ինքեան ձայնիւ, և ոչ մուրացածոյ բարբառով, շահել զնոպիս արանց և կանանց առնասաբակ յամենայն յեկեղեցիս բաղմութեանն»<sup>1)</sup>:

Դազար Փարտիցու այս հասկածից պարզ յերեւմ ե, թե վորպիսի ծանր գժվարություններ կային քրիստոնեյության տուրածման համար և թէ վորքան զումարներ եր վատնվում: Միաժամանակ այս հասկածից պարզ յերեւմ ե, վոր հայերէն գրերի մասին առաջին մտածողը լինում է Մեսրոպ Մաշտոցը Վասահապուհի իշխանության տարիներին:

Վասահապուհի թագավորությունը տեսմ է մոտ 25 տարի և անցնում է զրեթի տուանց կովի, վորովինեան Արևելքի և Արեմուտքի յերկու հզոր պետությունները, այսինքն Սասանյան Պարսկաստանը և Բյուզանդական կայսրության միջև ստեղծվում է խաղաղության մի յերկար շրջան: Անհրաժեշտ է նշել, վոր Վասահապուհը քաջ թագավոր չեր և վոչ ել հմուտ ուղմագետ նա նշանավոր դիվանագետ եր և հայ Արշակունի թագավորների մեջ աչքի ընկնող մի դրասեր անձնավորություն:

Պարսկաստանի և Հոռմի միջի 387 թվի Տիգրոնի դաշնակրությունից հետո խաղաղությունը տեսմ է բալական յերկար ժամանակ, վորը, պիտի ասել, այդ յերկուների համար շատ հազվագի մի յերեւլյթ եր: Խաղաղության սկզբնական շրջանում իրանում իշխում են այնպիսի թագավորներ, վորոնք վերջ տաւով արտաքին պատերազմներին, զբաղվում են յերկրի ներքին գործերով: Այդ թագավորներից հայտնի յեն Վասահ (Բահրամ) Դ. (389—499), վորը կոչվում եր նաև կրմանշան (Քիրմանշան)—կրամանի թագավոր, վորովինեան նախքան թագավոր գանալը, իբ-

<sup>1)</sup> Դ. Փարպեցի—Պատմություն հայոց, գլ. Փ, եջ 28—29, Թիֆլիս 1908 թ.

թև թագաժառանկ վարում եր Կիրման գավառի կառավարման պաշտոնը, և Հազկերտ Ա. (399—420): Սրանք իրենց արտաքին քաղաքականության բնագավառում վարում եյին խաղաղ քաղաքականություն Բյուզանդիայի հետ, իսկ ներքին քաղաքականության մեջ անխնա պայքար եյին մղում ուղղմատենչ ազնը վականների և զրադաշտական մողերի գեմ՝ թուլացնելու համար նրանց ազգիցությունը պետական գործերում:

Պարսիկները Հազկերտին մեղավոր անուն տվին, իսկ հոռամեցիները մեծահոգի-աղնիվ թագավորի հոչակ, վորովինեան նա այնքան մեղմ եր վերաբերվում քրիստոնյաներին, վոր նույնիսկ թույլարար նրանց իր մայրաքաղաքում 410 թվին ժողով գումարել իրենց հոգեսր պետ ընտրելու համար: Նման մեղմ քաղաքականությունը նույնատարակոր պայմաններ եր ստեղծում Հայստանում ինչպես շինարարական, նույնապես և կուլտուրական աշխատանքների ծավալման գործում: Իրոք, Վասահապուհի թագավորության շրջանում ծավալվում է կուլտուրական բերքատվությունը, վոր հայ ժողովրդի ազգային գոյությունը, վոր հայ ժողովրդի ազգային գոյությունը ու առաջարկությունը պարագաների մասին առաջարկությունը և առաջարկությունը պարագաների մասին առաջարկությունը:

Քրիստոնեյությունն ամբողջ 4-րդ դարում, հակառակ ներսին Մեծի գործադրած ջանքերին, տիրապետող կրոն չեր հանդիսանում Հայտառանում: Հեթանոսական կրոնը շարունակում եր պայքարել քրիստոնեյության դեմ: Մի շաբթ լեռնային գավառներում քրիստոնեյությունը զեր մուտք չեր գործել՝ չնայած քրիստոնյա քարոզիչների ու իշխանության կողմից զործադրած մի շաբթ բանի միջոցների: Քրիստոնեյության տարածման համար կաղմակերպվում է մի նոր շաբթում, վորի մեջ Վասահապուհի թագավորին ընկնում եր Թեոդորոս Մեծի գերը: Փորձը ցույց ավելից, վոր բանի ուժի զործադրման միջոցով Հայաստանում հնարավոր չեր տալածել քրիստոնեյություն: Քրիստոնյա քարոզիչներն ու զործիչներն այժմ աշխատեցին խաղաղ միջույղով տարածել քրիստոնեյությունը:

Այդ գործի զաւթ կանոնիցին 5-րդ դարի աշքի ընկնող յերկու վանականներ՝ Սահակ կաթողիկոսը և Մեսրոպ Մաշտոցը, իրանիղմը, իր մաղեցական կրոնի խաղաղաստությամբ,

սկսած Հ-ըդ դարից ուժեղ թափով ներխուժում եր Հայատան։ Այդ բանի ուժի առաջ չեր կարող դիմանալ Հայպատանը։ Միայն հայկական պետության ամրապնդումը, կուլտուրայի զարգացումը և քրիստոնեյության տարածումը յերկրում կարող եյին զուրավոր պատճեններ հանդիսանալ զբազաշտականության ներխուժման առաջ։ Սակայն կուլտուրայի զարգացումը կապված եր սեփական զրի և գրականություն ունենալու խոնդը հետ, վորից զուրկ եյին հայերը։ Այդ հանձարեկ դործի հեղինակը, ինչպես նշեցինք վերեւում, հանդիսացավ Մաշտոցը, իսկ այդ մտքի ստեղծման վայրը հանդիսացավ Գողթան զավառը։

Վասիլյալուհը, այդ Արշակունի վերջին նշանավոր թագաւորությունը և մատաքաղեց Սահակին ու Մեսրոպին։ Այսպիսով իրանիզմի աղդեցության դեմ պայքարելու գլխավոր միջոցներից մեկը հանդիսանում էր գիրն ու գրականությունը։ Այդ հանդամանքը ևս հայկական գրերի ստեղծման նախադրյալներից մեկը դարձավ։

4. ՄԵՐՈՊ ՄԱՇՏՈՅԸ ՅԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Մեսրոպ Մաշտոցը ծնվել է մոտավորապես 353 թվին Մուշ  
շի (Տարոն) գավառի Հացեկաց զյուղում՝ Վարդանի-  
քում։ Վորոշ ուսումնասիրողներ Մեսրոպի ծնունդը գնում են  
361 թվին։ Բայց առաջին թիվն ավելի հավաստի յև թվում մեզ,  
քան յերկրորդը, վորովհետեւ Կորյունի ասելով Մեսրոպը մահա-  
ցել է խոր ծերության մեջ, 80 տարեկանից ավելի հասակում։  
Նրա հայրը յեղել է աղաս գյուղացի, վաչ ծորտ, և զբաղվել է  
յերկրագործությամբ։ Մի շաբաթ հետազոտվածներ՝ Դրիգոր Խա-  
լաթյանը, Մկրտիչ Եմինը, Իսահակ Հարությունյանը, Մ. Որ-  
մանյանը և ուրիշները գտնում են, վոր նա աղնվականի վորդի  
յեր։ Բայց այդ մասին մենք վոչ մի տեղեկություն չենք գրա-  
նում մեր մատենագրության մեջ։ Նրանք յելնում են այն բա-  
նից, վոր Մեսրոպը բարձր պաշտոններ և վարել վորդից յեղքա-  
կացնում են, վոր միայն աղնվականները կարող եյին պաշտոն-  
ներ վարել։ Դա ճիշտ չեւ նախ ծարդ գարում զասային կաստա-  
յությունը շատ խորը չեր, յերկրորդ՝ ուսումը մենաշնորհ իրա-  
վունք չեր միայն իշխանների համար, նա մատչելի յեր նաև

յածք գասակարպերի վորոշ խամբերի համար։ Ուստի և Մեղքադ  
Մաշտոցը միշտ ել հնարավորություն ուներ սովորելու և իր ու-  
նակությունները հանդես բերելու, ինչպես նաև պաշտոնները գա-  
լելու գործում։ Հենց այն հանգամանքը, վոր Մեսրոպը մինչև իր  
կյանքի վերջը մնաց վարդապետ և մի վորեկ զավարի կամ նա-  
հանդի յեպիսկոպոսություն չստացավ, ցույց ե տալիս, վոր նա  
աղճվական ծագում չի ունեցել վորաթիեակ նրա բոլոր աղճվա-  
կան ծագում ունեցող աշակերտաները գրեթե ստանձնեցին այս  
ու այն զավարի յեպիսկոպոսությունը, իսկ հայանի յե, վոր 4—  
5-րդ զարերում յեպիսկոպոսությունները կազմակերպվում եյին  
նախարարություններին կից, վորի յեպիսկոպոսը ողեաք և լիներ  
ավագությունը։

Մեսրոպ Մաշտոցն սկզբում սովորում է Ներսես կաթողիկոսի բացած գովրացներից մեկում։ Նա հետագայաւմ ձևոք և բերում հաւաքենան, պարսկերեն և ասորելին լիզուների մեջ հմառաթյուն, վասի հետևանքով Արշակունիների պալատում Խոսրով Գևի և Վասահապուհ թագավորների ժամանակ ձևոք և բիրում սկզբում վիճակութան պաշտոն, հետո գտնում արքունի քարտուղար։

Մեսրոպ Մաշտոցի կյանքի ու գործունելության մասին տես-  
պեկությունները քիչ ունենք: Նրա կենսագիր Կորյունն ավելի  
շուտ վարք և տալիս, քան կենսագրություն: Կորյունի մոտ յե-  
ղած հայտաստի տեղեկությունները Մեսրոպի սկզբնական դու-  
ծունելության մասին հետեւալն եւ:

«Այն մարդը, վորին մենք պատմության ոկզբում (առաջին շաբաթում) հշանակում ենք և վորի մտսին շատապում ենք պատմելու, կոչվում եր Մաշտոց, Տարսն գավառի Հայելաց գյուղից, Վարդան անունով յերանելի մարդու վորդին Մանկության հասակում կրթվելով հելլենական կրթությումը, վարժված լինելով՝ գալիս և Արշակունի թագավորների գավառը (Այրարատ) և ծառայության և մտնում արքունի զիվանտան՝ գանձալով թագավորի կալմից արված հրամանների սպառավոր, Հայոց աշխարհի ծագարապետ Առավան կոչված մի մարդու ժամանակը: Տեղյակ և հմտությունով լինելով՝ աշխարհական կարգերին, իր զինվորական պետերի կողմից՝ հարմար եր համարվում նաև զինվորական պետերի կողմից՝ հարմար (Այրարատ)



ըական ծառայության: Միաժամանակ ուշադիր հետևում եր Ասալածաղունչ զրբի լնթերցանության»:

«Առն զոր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, եր Մաշտոց անուն, ի Տարոնաշկան գավառէն, ի Հացեկաց գեղջիէ, որդի առն երանելոյ Վարդադան կոչեցելոյ: Ի մանկութեան տիսն վարժյալ՝ հելենական դպրութեամբն, եկեալ հասեալ ի գաւառն Արշակունեաց թագաւորաց Հայոց մեծաց, կացեալ յարքունական զիւանին, լինել ոպասաւոր արքայաւառը հրամանին առ հազարապետութեամբն՝ աշխարհիս Հայոց՝ Առաւանոյ ուրումն: Տեղեկացեալ և հմուտ եղալ աշխարհական կարգաց, ցանկալի եղեալ զինուրական արուեստին իւրոց գօրականացն, և անդէն ուշ եղեալ փութով ընթերցուածոց աստուածեղեն զրոց»<sup>1)</sup>:

Մերոպին արքանի պաշտոններում մեռմ և տանը տարի, վորակ և ծանոթանում և Սահակ կաթողիկոսի հետ, զոր իր ժամանակի ամենազարգացած և կրթված անձնավորությունն եր: Սահակի կողմից նա մոտ 394—395 թ. թ. Ճեմապիլում և վարդապետ—հոգևորական, թողնելով արքունի քարտուղարի պաշտոնը, և վորպես քարոզիչ ուղարկվում և Գողթան գավառը (ներկայիս Առուելիս, Նախիջևանի ինքնավար հանրապետությունում) հեթանոսության գետ քարոզություն անելու: Մերոպին հաջող վում և այդ գավառի իշխան Շաբիթի զինվորական ուժի միջոցով բանի կերպով ասքածնել քրիստոնեաթյունը: Դա նշանակում եր, զոր չնայած Դրիգոր Լուսովորիչի ժամանակից անցել եր մոտ հարյուր տարի, բայց գարձյալ սրի ոգնություն եր զգացվում քրիստոնեաթյունը ասրածելու համար: Մերոպը Դողթանից անցնում և Սյունիք, բայց գարձյալ հանգիպում և լուրջ զժվարությունների: Սյունիքում Մերոպին աշակցություն են ցույց տալիս իշխանները, առանձնապես Վազինակը:

Մերոպի քարոզչության ժամանակ հանգիպած դժվարությունների և հայերին զրերը ստեղծելու մասին Մ. Խորենացին գրում ե. «Յեվ յերանելի Մերոպը քարոզելու ժամանակ պահանջուն չեր կրում, զորովինեան ինքն եր թե լնթերցու

1) Կորյուն—«Պատմութիւն վարուց և մահուան որբոյն Մերոպա վարդպատի մերոյ թարգմանչի», էջ 9, Թիֆլիս 1813 թ.:

